# ԿԱՐԻՆ-ԹԵՈԴՈՒՊՈԼԻՍԸ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

*Արաբ պատմագրության մեջ հիշվում է մի ավանդություն Կարնո քաղաքի մասին, որը տեղական ծագում ունի։ IX դ. արաբ պատմիչ Բալազուրին խոսելով Հայաստանում բյուզանդական տիրապետության մասին գրում է. «Հոռոմների գործերը երբեմն կարգավորվում էին և [տեղի իշխանները] դարձել էին ինքնագլուխ մանր տիրակալների նման։ Նրանց (Հայաստանի) վրա իշխեց նրանցից մի մարդ՝ Արմինիակուսը, որը մեռավ և նրանից հետո իշխեց նրա կինը՝ Կալի կոչված։ Սա կառուցեց Կալիկալա քաղաքը և այն կոչեց Կալի Կալա և որի իմաստն է Կալիի բարեգործությունը։ Ասված է, որ նա պատկերված է նրա դարպասներից մեկի վրա։ Արաբները Կալի Կալան արաբացրին և կոչեցին Կալիկալա»[1]։ Նույն դարի արաբ աշխարհագրագետ Իբն ալ-Ֆակիհը ավելի հակիրճ է հիշում այս նույն ավանդությունը. «Իսկ Կալիկալան մի կին է, որը կառուցել է Կալիկալան և սա նրա անունով է կոչվել, իսկ դրա իմաստն է Կալիի բարեգործությունը»[2]։ Իբն ալ-Ասիրը գրեթե կրկնում է Բալազուրիի պատմածը. «Իսկ Կալիկալա է կոչվել այն պատճառով, որ Արմինիակուսի պատրիկի կինը, որի անունը Կալի էր, կառուցել է այս քաղաքը և կոչել Կալի Կալա, այսինքն Կալիի բարեգործությունը, իսկ արաբները արաբացրել են այն և ասել Կալիկալա»[3]։*

*Այս արաբական ավանդությունը ունի իր նախատիպը, որը ձևավորվել է Բյուզանդական Հայաստանի հունացած (կամ գուցե քաղկեդոնիկ) հայերի միջավայրում։ Այն գտնում ենք քաղկեդոնիկ հայի կողմից մոտավորապես 700 թ. շարադրված Հայոց համառոտ ժամանակագրության մեջ, որի հունարեն թարգմանությունն է մեզ հասել։ Հայոց վերջին Արշակ Արշակունի թագավորի մասին հիշելուց անմիջապես հետո նա գրում է. «Նրա ժամանակ Հայաստանը բաժանվեց, կառուցվեց Թեոդոսուպոլիսը, որը նախկինում գյուղ էր և կոչվում էր Կալե Արխե այն պատճառով, որ երբ մեծ առաքյալ Բարթուղիմեոսը Պարթևաստան գնալիս նփրատ գետում մկրտեց Պարսից արքայի եղբորորդուն և նրա հետ միասին երեք հազար մարդ, այնտեղ նա կառուցեց ամենասրբուհի Աստվածածնի անվան տաճար և այդ վայրում գտնվող գյուղն անվանեց Կալե Արխե (Բարի սկիզբ)։ Ահա Թեոդոսիոս Մեծը ծանոթանալով այդ վայրին և նրա ջրին, հավանեց այն և կառուցեց հռչակավոր մի քաղաք և անվանեց այն Թեոդոսուպոլիս»[4]։*

*Պատմական ստույգ տեղեկություններից երևում է, որ իրոք վաղ միջնադարում Ս. Աստվածածնի տաճար է եղել Կարնո քաղաքում։ VI դ. հույն պատմիչ Պրոկոպիոսը Հուստինիանոս Ա կայսեր կառուցումները նկարագրելիս հիշում է, որ նա Թեոդուպոլսում Աստվածածնի տաճար կառուցեց և ավելացնում է նաև, որ Թեոդուպոլսի մոտակայքում վերանորոգեց Քառասուն մարտիրոսաց վանքը[5]։*

*Հայ վարքագրության մեջ հայտնի չէ Ս. Բարթողիմեոսի Կարնո կողմերը եկած լինելու ավանդությունը[6], այսուհանդերձ նրա վարքում հիշվում է, որ Վասպուրականի Անձևացյաց գավառում Անահիտ դիցուհու մեհյանը քանդելով փոխարենը կառուցել է Ս. Աստվածածնի տաճարը և վրան դրել Տիրամոր փայտակերտ քանդակը, որն իր հետ բերել էր Պաղեստինից։ Հավանաբար Կարնո կողմերում ևս եղել է մի ավանդություն Բարթողիմեոսի գործունեության մասին, որի արձագանքն է վերոհիշյալ հատվածը հայ քաղկեդոնականի ժամանակագրության մեջ։*

---

[1] Liber expugnationis regionum auctore al-Beladsori, Lugd. Bat. 1866, p. 197.

[2] Bibl. Geogr. Arab., V. 292.

[3] Ibn al-Athir, al-Kamil, III, p. 40.

[4] G. Garitte, La Narratio de rebus Armeniae, Louvain, 1952, p. 27, 65—70. *Հայերեն թարգմանությունը Հ. Բարթիկյանի, «Բանբեր մատենադարանի», № 6, էջ 461։*

[5] *Պրոկոպիոս Կեսարացի, թարգմ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 195։*

[6] *Ավգերյան, Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, Թ, Վենետիկ, 1813, էջ 425—426։ Ղ. Ալիշան, Արշալույս քրիստոնեութեան Հայոց, Վենետիկ, 1902, էջ 32—43։*

Հայմամուրքում «Վարք և յիշատակ սուրբ հօրն մերոյ վարդապետին Մեսրոպայ» հատվածում պատմվում է հետևյալը. Մեսրոպ Մաշտոցը կայսրից թույլտվություն է խնդրում Բյուզանդական Հայաստանում շրջելու և ուսուցանելու համար։ Կայսրը հրաման է տալիս և միաժամանակ թույլատրում ամուր քաղաք կառուցել Կարին գավառում։ Մեսրոպի քեռորդին՝ Մովսես Խորենացին շինարարության մեջ նրա խրատատուն էր եղել։ Նրանք շինում են Կարնո քաղաքը, որը Թեոդոսուպոլիսն է և Հայոց ու հոռոմների մեծ ամրությունը Պարսից սահմանի վրա։ Այս տողերը կարդալուց հետո զարմանալի չէ, որ Կարնո քաղաքի տեղում գտնված գյուղում առաջին քրիստոնեական եկեղեցիների հիմնադիրը ըստ վերոհիշյալ ավանդության Բարթողիմեոս առաքյալն է, քանի որ ինչպես տեսանք, հենց Կարնո քաղաքի ավանդական հիմնադիրներն են Մեսրոպ Մաշտոցը և նրա օգնական Մովսես Խորենացին։

Կարնո քաղաքի հիմնադրման մասին Հայմամուրքի տվյալների հետ առնչություն ունեցող մի հայկական ավանդություն ևս գտնում ենք Գ. Սրվանձտյանցի հրատարակած «Ցաղագս սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի և Դաւթի» երկի մեջ, ըստ որի Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը Թեոդոս կայսեր մոտ են ուղարկում աշակերտների, որոնց մեջ էին Մովսես Խորենացին և Դավիթ Անհաղթը։ Այս երկուսին կայսրը ուղարկում է Արևմտյան Հայաստան՝ կառուցելու Կարնո քաղաքը։ Դավիթն ու Մովսեսը կառուցում են քաղաքը հզոր պարիսպներով և կանգնեցնում «բուրգք խոսրովայինք» և բարդ ամրություններ են պատրաստում, գաղտնի անցքերով և այլն, որոնց մանրամասն նկարագրությունը[8] որոշ չափով հիշեցնում է Պրոկոպիոսի տողերը Կարնո քաղաքում Հուստինիանոսի կառուցած ամրությունների մասին։

Վերոհիշյալ արաբական ավանդության մեջ հիշված «Արմինիակուսի պատրիկի կինը» ունի իր զուգահեռները «Սասնա Ծռերի» մեջ։ Պատումներից մեկում հիշված է, որ Սանասարին նամակ է հղում հրապուրելու համար Արզրումի թագավորի աղջիկը (այլ պատումներում Պղնձե քաղաքի թագավորի աղջիկը)։ Գալով Արզրում, Սանասարը տեսնում է կախարդված «ուզնկանների» (խնամախոսների) արձանները և այլն[9]։ «Թագավորի աղջկա» վիպական կերպարը, ընդհանրապես գտնում ենք նաև մարմնավորված հանձին «Սասնա Ծռերի» Դագիկ թագավորի աղջկա (Ծովինար) և Կեղծ-Վակիդիի պատմության մեջ Հայաստանի (Խլաթի) թագավորի աղջկա (Թարուն)։

Հայ քաղկեդոնիկ պատմիչի ժամանակագրության մեջ վերոհիշյալ ավանդությունը բնականաբար ծագել է նախքան Հայաստանի արաբական նվաճումը, այն ժամանակաշրջանում, երբ Կարնո քաղաքը ռազմագիտական կարևորագույն դեր էր կատարում Բյուզանդական կայսրության արևելյան սահմանների վրա։ Սա մի հայկական քաղաք էր, բայց ուժեղ բյուզանդական ազդեցության տակ և բնական է, որ հայկական ժողովրդական ավանդության մեջ հունարեն (Կալե Արխե) բառախաղ է կատարվում։

Հնագույն ժամանակներից Բարձր Հայքի Կարին գավառում եղել է մի գյուղ նույն անունով, որը սակայն նշանակալից ոչ մի դեր չի խաղացել գավառի կյանքում։ Կարին անունը շատ հին է և նույնիսկ կապվում է Հայասայի Կարանի թագավորի անվան հետ[10]։ Ստրաբոնը այն կոչում է Καρηνῖτις, իսկ Պլինիոսը Carinitis[11]։ 387 թ. Մեծ Հայքի թագավորության մասնատումից հետո, երբ Բարձր Հայքը (Կարնո կողմ) և Ծոփքը խլվելով հայոց թագավորությունից անցան Հռոմեական (395-ից արևելա-հռոմեական կամ բյուզանդական) կայսրությանը, իսկ բուն Հայոց թագավորությունը ընկավ Սասանյան Իրանի ազդեցության տակ, կայսրությունը անհրաժեշտ գտավ իր արևելյան սահմանի վրա հուսալի ամրություններ ունենալ։

Թեոդոս կայսեր ժամանակ Անատոլիոս զորավարը 421 թ. Կարնո գավառի վերոհիշյալ գյուղում մի քաղաք հիմնեց։ «Մի գեղեցկադիր լեռան ստորոտում, գրում է Խորենացին, գտավ մի տեղ, որտեղ բխում են բազմաթիվ մանր աղբյուրներ, մաքուր ջրերով և այդտեղ գծեց քաղաքի տեղը։ Նրան շրջապատեց խոր փոսով, շատ խորը դրեց պատվարի հիմքը, նրա վրա ահագին բարձր աշտարակներ շինեց, որոնցից առաջինը կոչեց Թեոդոս՝ Թեոդոսի պատվին։ Սրանից այն կողմը շինեց ժայռաձև աշտարակներ, նավերի ցուկների նման և անցքեր՝ ներս ընկած խորշերով, որոնք դեպի լեռն են դարձած։ Այսպես շինեց նաև դեպի հյուսիսային դաշտը [նայող կողմում], իսկ արևելք ու արևմուտք [դարձած կողմերում] կանգնեցրեց բոլորաձև աշտարակներ։

---

7 Ցայսմաւուրք, Մեհեկի ԺԴ (փետրուար ԺԹ)։

8 Հնոց և նորոց, Պատմութիւն վասն Դաւթի և Մովսէսի Խորենացւոյ, Կ. Պոլիս, 1874, էջ 46—49։ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 449։

9 Սասնա Ծռեր, Երևան, 1934, Ա, էջ 610—614։

10 Г. Капанцян, Хайаса—колыбель армян, Ереван, 1947, стр. 67—68.

11 Հ. Հիւրշման, Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 132—134։

Իսկ քաղաքի մեջ մի բարձրավանդակի վրա շինեց բազմաթիվ մթերանոցներ, որ կոչեց Ավգոստիոն՝ Ավգոստոսի պատվին։ Եվ շատ տեղերից անհայտ ուղիներով ուրիշ ջրեր բերեց մտցրեց քաղաքը։ Քաղաքը լցրեց գենքերով ու պահապան դնդերով և կոչեց Թեոդուպոլիս, որպեսզի քաղաքի անունը հիշելով անմահ մնա [Թաղավորի] անունը։ Իսկ բղխող շերմուկները վերևից ծածկեց տաշած քարերով»[12]։

Պրոկոպիոս Կեսարացին հակիրճ տողերով է նշում այս փաստը. «Նրա հռոմեացիների կայսր Թեոդոսը ստացավ Արշակի տերությունը, որի մասին ես քիչ առաջ պատմեցի, բլուրներից մեկի վրա ամրոց կառուցեց, որը սակայն մատչելի էր թշնամիներին և այն Թեոդոսուպոլիս անվանեց»[13]։ Թեոդուպոլիսը ռազմական և վարչական կարևոր նշանակություն ուներ և Բարձր Հայք (պաշտոնապես Մեծ Հայք կոչված) նահանգի վարչական կենտրոնն էր։ Նա միաժամանակ ռազմագիտական կարևոր նշանակություն ուներ Բյուզանդիայի ձեռքում գտնվող հայկական բոլոր նահանգների համար։

Պարսկա-բյուզանդական պատերազմների ժամանակ սասանյան Կավատ արքան 502 թ. պաշարեց Կարնո քաղաքը և գրավելով հիմնահատակ քանդեց, սակայն երբ պարսիկները պարտվեցին, Կարնո քաղաքը նորից անցավ Կայսրությանը և 506 թ. դաշնագրով նախկին դրությունը վերականգնվեց։ Անաստաս կայսրը վերակառուցեց այն. «Քաղաք կառուցեց պարսպի մեջ առնելով այն բլուրը, որի վրա էր գտնվում Թեոդոսի ամրոցը։ Նա քաղաքին տվեց իր անունը, բայց այնուամենայնիվ նրան չհաջողվեց ջնջել քաղաքի հիմնադրի՝ Թեոդոսի անունը»[14]։ Մի այլ տեղում, խոսելով քաղաքի ամրացման մասին, պատմիչը նշում է, որ այսպիսով Թեոդուպոլիսը և Դարան դարձան Կայսրության երկու ամենախոշոր ամրոցները արևելյան սահմանի վրա[15]։

Սակայն Անաստասի կառուցած պարիսպները անբավարար էին և Հուստինիանոս կայսրը (527—565) մեծ վերափոխումներ մտցրեց Թեոդուպոլսում։ «Թեոդուպոլսի պարիսպը,— դրում է Պրոկոպիոսը,— բավական ստվար էր, բայց բարձրությունը չէր համապատասխանում այդ ստվարությանը։ Նրա բարձրությունը մոտավորապես երեսուն ոտնաչափի էր հասնում և գրոհող թշնամիների համար, մասնավորապես պարսիկների, այն շատ դյուրամատչելի էր։ Նա մատչելի էր նաև այն պատճառով, որ պաշտպանության համար չուներ ոչ նախապարիսպ, ոչ էլ խրամ։ Բացի այդ, քաղաքին մոտիկ կար մի բարձունք, որը պարսպի վրա էր կախված։ Հուստինիանոս կայսրը դրա առաջն առավ հետևյալ կերպ. նախ և առաջ նրա շուրջը շատ խոր խրամ փորեց։ Դրանից հետո նշված բարձունքը հարթեց և վերածեց անանցանելի և անելանելի փապարների։ Որպեսզի պարիսպը շատ բարձր լինի և միանգամայն անառիկ, նա վարվեց այնպես, ինչպես Դարա քաղաքում։ Պարսպի ատամնաշարերը նա սեղմեց իրար, ատամների միջև թողնելով այնքան տարածություն միայն, որ բավական լիներ այնտեղից հարվածել պաշարողներին, ապա նրանց վրա պարսպի ամբողջ երկարությամբ քարից էմբոլոն կառուցեց, որի վրա վարպետորեն տեղադրեց այլ ատամնաշար։ Այնուհետև [պարիսպը] շրջապատեց նախապարիսպով, որի յուրաքանչյուր աշտարակը մի-մի բերդ էր և ամբողջ ամրությունը շատ նման էր Դարա քաղաքի [ամրությանը]։ Նա այնտեղ հաստատեց բոլոր զինված ուժերը և Հայքերի զորավարին ու այնպես արեց, որ հայերը լինեն ավելի հզոր և այլևս չսարսափեն պարսկական հարձակումներից»[16]։

571 թ. ապստամբության ժամանակ Թեոդուպոլսում նստող զինվորական հրամանատար Հուստինոսը ձգտում էր օգնել հայ ապստամբներին։ Ապահովության համար այստեղ փոխադրվեցին Դվինի գանձարանը, կաթողիկոսարանի արժեքավոր կարասիները, անոթները և այլն։ Պարսկա-բյուզանդական քսանամյա պատերազմի ժամանակ խոսրով արքան 576 թ. հարձակվեց Թեոդուպոլսի վրա, բայց չկարողանալով գրավել, իր ճանապարհը շեղեց դեպի հարավ-արևմուտք։

VII դարում, երբ նորից սկսեց պատերազմը Բյուզանդիայի ու Իրանի միջև, խոսրով Փարվեզ արքան 608 թ. գրավեց Կարնո քաղաքը։ Այստեղից Համադան գերի տարվեց հայ քաղկեդոնիկ[17] Հովհան կաթողիկոսը, նրա հետ մեկտեղ նաև քաղաքի բնակիչները[18]։ 623 թ. Հերակլ կայս-

---

12 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ. Ս. Մալխասյանի, Երևան, 1940, էջ 235։

13 Պրոկոպիոս, էջ 196։

14 Նույն տեղում, էջ 196։

15 Նույն տեղում, էջ 24։

16 Նույն տեղում, էջ 196—197։

17 G. Garitte, St. Théodore, évêque de Karin-Theodosiopolis, Armeniaca, Venise, 1969, p. 1—8.

18 Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, Երևան, 1939, էջ 55։

ը գրավեց Կարնո քաղաքը և Հայաստանի վրայով մտավ Պարսկաստան[19]։ 629 թ. դաշնագրից հետո Կարնո քաղաքը մնաց որպես Բյուզանդական Հայաստանի մայրաքաղաքը, որտեղ նստում էր Հայոց իշխանը։ Այստեղ կայացավ նաև 633 թ. եկեղեցական ժողովը, որին Դվինից հրավիրված էր Եզր կաթողիկոսը[20]։

Արաբական նվաճումից հետո Կարնո քաղաքը խալիֆայության համար դարձավ առաջնակարգ ռազմական ամրություն Բյուզանդիայի դեմ և նույն նշանակությունն ուներ արաբների համար, ինչ որ ունեցել էր Բյուզանդիայի համար ընդդեմ Սասանյան Իրանի։ Արաբները Թեոդուպոլիսը կոչեցին Կալիկալա, քաղաքի հայկական անվան ասորական ձևից ազդվելով։ Ասորի պատմիչ Դիոնիսիոս Տելլ Մահրացու ժամանակագրության մեջ կա Qalinqala ձևը[21], որը բացայտորեն «Կարին քաղաք» անվան աղավաղումն է, միայն թե Կարին անվան «ր»-ն վերածված է «լ»-ի, իսկ քաղաք (քալաք) բառի վերջին «ք»-ն ընկած է։ Ահա այս ասորական Կալին Կալա ձևից մի «ն»-ի անկումով ստացվել է արաբական Կալիկալա ձևը։

Բանն այն է, որ հունական Կալի [Արխի] ձևն էլ ասորական Կալինից է ծագում, մանավանդ որ բառավերջի «ն» հնչյունը հունարենում կարող էր ընկալվել որպես ուղիղ խնդրի հոլովական վերջավորություն։ Այսպիսով, հունացած հայերը՝ Կարին անվան ասորական Կալին ձևն է, որ յուրովի ստուգաբանելով Կալի (բարի) իմաստով են մեկնաբանել։

Սակայն արաբները այս տեղանվան փոխառության հետ միացրել են նաև տեղական հինավուրց ավանդությունը և այսպիսով ստուգաբանել են Կալիկալա անունը, կապելով Կալե Արխեի (միջին հունարեն արտասանությամբ՝ Կալի Արխի, այսինքն՝ բարի սկիզբ) հետ։ Միայն թե արաբները բարու իմաստը տվել էին ոչ թե կալի բառին, այլ կալային, հավանաբար երկու բառերը իրար հետ շփոթելով։

Այսպիսով, արաբների մոտ ծնունդ է առել մի նոր ավանդություն, որը կորցրել է իր քրիստոնեական կերպարանքը և փոխանակ Ս. Բարթողիմեոսի, որը Աստվածամոր քանդակն էր դրել եկեղեցու վրա, կառուցողի դերում հանդես է գալիս մի առասպելական կին, որն իր քանդակն էր դրել քաղաքի դռներից մեկի վրա։ Իրոք Կարնո քաղաքի պարիսպների վրա եղել են հրեշտակի և կույսի քանդակներ, որոնք մինչև անցյալ դարը դեռ մնացել էին։ Հ. Ներսես Սարգիսյանը, խոսելով Կարնո քաղաքի պարիսպների հյուսիսային դռան մասին, գրում է. «Այս դրան ներքին պարըսպին բարաւորին վրա քանդակուած էին մարդ մը ձիու վրա, նիզակ ի ձեռին և երկու կողմը առիւծներ, հրեշտակի և կոյսի պատկերներ», իսկ սրանց կողքին եղել է հունարեն արձանագրություն[22]։

Կարնո քաղաքի մասին հայկական զրույցի արաբական տարբերակի ծնունդը պատահական չէր, քանի որ այդ քաղաքը արտակարգ մեծ դեր էր կատարել արաբական խալիֆայության Բյուզանդիայի դեմ մղած պատերազմներում։

Վերին Միջագետքի նվաճումից (639) անմիջապես հետո արաբները ոչ միայն բուն Հայաստանը ասպատակեցին (Տուրուբերանի վրայով), այլև արշավանքներ ուղարկեցին Եփրատն ի վեր մինչև Կամախ, սակայն ինչպես երևում է, նրանք այդ ժամանակ չկարողացան գրավել Կարնո քաղաքը։ Հայաստան մտնող արաբական զորամասը, ըստ Բալազուրիի, խլաթից հետո հասավ «Թթու ջուր» (ալ-այն ալ-Համիզա)[23], որը գուցե Կարնո գավառում էր, բայց քաղաքի գրավման մասին խոսք չկա։ 654 թ. մեծ արշավանքի ժամանակ Հարիր Իբն Մասլամա զորավարը հենց սկզբում գրավեց Կարնո քաղաքը և ապա Հայաստանի մյուս մասերը[24]։ Սեբեոսը վկայում է, որ արաբները կողոպտեցին քաղաքի ոսկին ու արծաթը և այլ հարստություն[25], իսկ ըստ Բալազուրիի՝ բնակիչները քաղաքը հանձնեցին երկու պայմանով՝ գլխահարկ վճարել և հեռանալ քաղաքից, և նրանցից շատերը հեռացան քաղաքից ու գնացին Փոքր Ասիա[26]։ Այդ ժամանակ Հարիրը

---

19 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 143—145։

20 Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, Բեյրութ, 1959, էջ 687։

21 Chronique de Denys de Tell-Mahre, P., 1895, p. 97. Միքայել Ասորին տալիս է Qaliniqala ձևը, որը վերադրում է հույներին, Chronique de Michel le Syrien, Paris, II, 1901, p. 521. III, 1905, p. 105.

22 Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 74։

23 Beladsori, 176.

24 Beladsori, 197.

25 Սեբեոս, էջ 153։

26 Beladsori, 197.

կրավոր օգնություն խնդրեց Ասորիքի կուսակալ Մուավիայից, որը երկու հազար հոգու ուղարկեց և Հարիրը սրանց բնակեցրեց Կարնո քաղաքում, տալով կալվածներ։

Ըստ արաբ պատմիչի վկայության, 654 թ. նվաճումից հետո արաբական զորքը միշտ էլ մնաց Կարնո քաղաքում, սակայն այն բանից հետո, երբ Հայոց տերությունը անկախ վիճակ ստացավ և մանավանդ 80-ական թվականներին, երբ բյուզանդացի զորավար Լեոնտիոսը և ապա նաև Հուստինիանոս կայսրը արշավանքներ կատարեցին դեպի Հայաստան, Կարնո քաղաքը արաբների ձեռքում չմնաց։

Համենայն դեպս 693—701 թթ. Մուհամմադ Իբն Մրվանի արշավանքի ժամանակ, երբ Հայաստանը վերջնականապես նվաճվեց օմայանների կողմից, արաբները հաստատվեցին Կարնո քաղաքում և թեև Արմինիա ոստիկանության մեջ էր մտնում այս քաղաքը, այնուամենայնիվ ուներ իր զինվորական կառավարիչը և որոշ վարչական ինքնուրույնություն, միաժամանակ սերտորեն կապված լինելով «Վերին Միջագետքի սահմանային զոտի» կոչված վարչական միավորի հետ։ 747—750 թթ. հայկական ապստամբության ժամանակ Դրիզոր Մամիկոնյանը գրավեց Կարնո քաղաքը և այնտեղ հաստատվեց ու մնաց մինչև իր մահը[27]։ Աբբասյանների խալիֆայության հաստատման տարիներին, օգտվելով դեռ անորոշ դրությունից, Բյուզանդիայի կայսր Կոստանդին Կոպրոնիմոսը 652-ին գրավեց Մելիտինեն, իսկ ապա՝ նաև Կարնո քաղաքը (ըստ Ասողիկի հայոց Մդ թվականին, այսինքն 755-ին)[28]։ Ըստ Բալազուրիի, արաբներն այդ ժամանակ մեծ զորք չունեին քաղաքում, իսկ կառավարիչն էր Աբու Քարիման։ Բյուզանդական զորքի հրամանատարն էր Քուսան անունով մի հայ, որը պաշարեց քաղաքը, իսկ քաղաքի բնակիչներից երկու հայ եղբայրներ պարիսպը ծակեցին և Քուսանին ներս մտցրին։ Քուսանը կործանեց քաղաքի պարիսպները և շատ արաբների սպանեց[29]։ Այդ ժամանակ հույները տարան «տերունական խաչի նշանը», որը քաղաքում էր եղել որպես սրբություն[30]։ Մյուս տարում (այսինքն 756 թ.)[31] Արմինիայի եզիդ ոստիկանը վերագրավեց քաղաքը, մարդահարկի միջոցով վերակառուցեց պարիսպները և նորից այնտեղ արաբների բնակեցրեց[32]։

774—775 թթ. ապստամբության ժամանակ Մուշեղ Մամիկոնյանը Կարնո քաղաքը պաշարեց՝ մեծ անհանգստություն պատճառելով արաբներին, սակայն 775 թ. գարնանը Ամր Իբն Իսմայիլի հարձակման ժամանակ ստիպված եղավ վերացնել պաշարումը, թեև արաբական կայազորը գրեթե պատրաստ էր հանձնվելու[33]։ Ըստ Բալազուրիի, հույները հարձակվեցին Կարնո քաղաքի վրա նաև Մուտասիմ խալիֆայի ժամանակ (833—842) և մեծ վնաս հասցրին քաղաքի պարսպին։ Մուտասիմը հինգ հարյուր հազար արծաթ դրամ (դիրհեմ) ծախսեց ամրացնելու համար պարիսպները[34]։

Բագրատունյաց ժամանակաշրջանում Կարնո քաղաքը Հայոց թագավորության մեջ էր մտնում, սակայն ուներ հատուկ դոյավիճակ։ Նույնիսկ այն բանից հետո, երբ Հայաստանը իր բոլոր կապերը խզեց Աբբասյան խալիֆայությունից, Կարինում արաբական զորքերը դեռ մնում էին և այս էր պատճառը, որ հույները 895 թ. հարձակվեցին Կարնո քաղաքի վրա, պաշարեցին այն, բայց հետո թողեցին ու հեռացան[35]։ Քաղաքի զինվորական կառավարիչները, որոնցից այդ ժամանակաշրջանում գիտենք երկուսին (Զքրի և Բշիր) Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի ժամանակ թեև ենթակա էին Հայոց թագավորին, այնուամենայնիվ սերտորեն կապված էին նաև ուղղակի Աբբասյան խալիֆաների հետ։ Ըստ Կոստանդին Միրանածնի, արաբական կայազոր կար Կարնո քաղաքում և Ավնիկ ու Մաստատոն ամրոցներում[36]։

Սմբատ Ա-ի մահվանից (913) մինչև 949 թ. ընկած ժամանակահատվածում կայսրությունը արշավանքներ կազմակերպեց դեպի Հայաստան, մինչև որ կարողացավ գրավել Կարնո քաղաքը։

---

27 Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վրդ. Հայոց, Պետերբուրգ, 1887, էջ 124։

28 Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 142։ Նույն թվականը տալիս է նաև Միքայել Ասորին, Chronique de Michel le Syrien. II, 521

29 Beladsori, 199.

30 Ղևոնդ, էջ 129։

31 Ասողիկ, էջ 142։

32 Ղևոնդ, էջ 129։

33 Ղևոնդ, էջ 142, 148։

34 Beladsori, 199.

35 Թովմայի վրդ. Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Պետերբուրգ, 1887, էջ 231։

36 Const. Porph., De adm. imp., Bud., 1949, I, 211—213.

Այդ նույն ժամանակ մահմեդական տարբեր երկրներից օգնական զորքեր էին ուղարկվում Կարնո քաղաք[37]։ Ըստ Միրանածնի, Կարնո շրջակայքը իրար ետևից ասպատակեցին մի քանի բյուզանդական զորավարներ՝ Արմենիակոն բանակաթեմի զինվորական կառավարիչ Լալակոնը ուրիշների հետ, Կատակալոն Մագիստրոսը, Հովհան Կուրկուասը և նրա եղբայր Թեոփիլոսը։ Իսկ 922 թ. Հովհան Կուրկուասը ասպատակեց Կարին, Բասեն գավառները և հասավ մինչև Դվին[38]։ Վերջապես 949 թ. հույները վճռական հարձակման անցան։ Դրանից առաջ Պրոտոսպաթարիոս Հովհան Առաքոնիգեսը և Պատրիկ Թեոփիլոսը մեծ ավերածություններ էին գործել Ավնիկի շրջակայքում։ Հովհանը գրավեց Մաստատոնը և հանձնեց հայազգի Մագիստրոս Բագարատին (Պանկրատիոս)։ Հենց 949 թվին բյուզանդացիք գրավեցին Կարնո քաղաքը[39] և թեև մեծ վնասներ պատճառեցին, այնուամենայնիվ պահեցին իրենց ձեռքում, իսկ կառավարիչ նշանակվեց Թեոփիլոսը։

Կարնո քաղաքը 949 թ. ավերումից հետո մնաց սոսկ որպես ռազմական կետ, բայց այլևս մեծ քաղաք չէր, քանի որ նրանից որոշ հեռավորության վրա արդեն գոյություն ուներ վաճառաշահ Արծն քաղաքը։ Կարծվում է, որ Կարնո քաղաքի նույնիսկ բնակչությունը տեղափոխվել էր Արծն, որտեղ XI դարում 150 հազար մարդ էր ապրում։ 979 թ., երբ ապստամբ Վարդ Սկլերոսը պարտվեց և կայսրը Տայքի Դավիթ Կյուրապաղատ Բագրատունուն շնորհեց հայկական այն գավառները[40], որոնք նա խոստացել էր ապստամբության դեմ պայքարի նրա մասնակցության փոխարեն, Կարնո քաղաքը ևս անցավ Դավթին։ Այս տարիներից մնացել է մի հունարեն կիսատ, կցկտուր արձանագրություն, որը կրում է արարչագործության 6500, այսինքն 992 թվականը[41]։ Դավիթ Կյուրապաղատի սպանությունից հետո, երբ նրա հողերն անցան Կայսրությանը, վերջինս այստեղ բանակաթեմ կազմակերպեց (Իբերիա կոչված), որի մեջ մտնում էր նաև Կարնո քաղաքը։ Քաղաքի պարիսպների վրա պահպանվել է մի այլ հունարեն արձանագրություն, ուր հիշվում է Իբերիայի կատապան Ռոմանոս Դալասինոսը[42] և թեև չկա թվական, այսուհանդերձ, կասկածից վեր է, որ սա վերաբերում է այն տարիներին, երբ հայկական հողերից կազմված այս բյուզանդական բանակաթեմի կատապանն էր Ռոմանոսը (1023—1026)։

Կարնո քաղաքը խիստ տուժեց պատերազմների ավերածությունից, և թեև 1018—1019 թթ. հույները վերակառուցեցին[43], այսուհանդերձ կարծես թե V—XI դարերից ոչ մի կառույց չի մնացել։ Հետազոտողներն ու ճանապարհորդները այստեղ չեն նկատել ոչ մի հին եկեղեցի կամ այլ կառուցվածք, բացի պարիսպների ու դարպասների որոշ շնչին մասերից[44]։ 1048 թ. սելջուկները գրավեցին ու ավերեցին Արծնը, որից հետո նորից է սկսվում Կարնո քաղաքի ծաղկումը։ Այս շրջանում քաղաքը արևելյան ժողովուրդների մոտ կոչվում է Արզրում (Էրզրում), որը Արծն ալ-Ռում կամ Արզն ալ-Ռում անվան աղավաղումն է[45]։

Կարնո քաղաքի մասին մի ուրիշ հայկական ավանդություն ևս անցել է արաբ մատենագիրներին։ Թ. դարի արաբ աշխարհագրագետ Իբն ալ-Ֆակիհը (նույնը տալիս են նաև Աբու Դուլֆը և Ցակուտը) հաղորդում է հետևյալը. «Պատմել են [հիշատակելի] հրաշալիքներից այն, որ Կալիկալայում քրիստոնյաների եկեղեցիներից մեկում կա մի տուն։ Երբ ծաղկազարդի գիշերն է լինում, այդ տան մի տեղից սպիտակ փոշի է դուրս գալիս մինչև առավոտ։ Առավոտյան այդ տեղը փակվում է մինչև հաջորդ տարվա նույն ժամանակը։ Կրոնավորները այն վերցնում են և բաշխում ժողովրդին։ Դա հատուկ դեղթափ է, թույների, կարիճների և օձերի խայթվածքի դեմ։ Նրանից մի դանգ[46] չրի հետ տալիս են խայթվածին խմելու և անմիջապես հանգստանում է։ Մի ուրիշ

---

[37] Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 158—163։

[38] Const. Porph., De adm. imp., I, 209.

[39] Ասողիկ, 179։ E. Honigmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches, Bruxelles, 1935, p. 79—80.

[40] Ասողիկ, 192։

[41] Հ. Ս. Քոսյան, Բարձր Հայք, Ա, Կարին քաղաքը, Վիեննա, 1925, էջ 10։

[42] N. Adontz, Notes arméno-byzantines, Etudes armeno-byzantines, Lisbonne, 1965, p. 163. 172.

[43] Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերտցւոյ, Երևան, 1963, էջ 28։

[44] Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Ա, Վենետիկ, 1907, էջ 918. H. F. B. Lynch, Armenia, travels and studies, II, London, 1901, p. 210—213.

[45] R. Hartmann, Erzurum, Enc. of Islam, II, Leyden—London, 1913, p. 31.

[46] 0,56 գրամ։

հրաշք էլ այն է, որ եթե այդ փոշին ծախվեց կամ փոխարենը որևէ նյութական արժեք վերցվեց, ապա խմողը չի օգտվի և իր ցավից չի բուժվի»[47]։

Բնական է, որ այս ավանդությունը ևս արաբները վերցրել են հայերից, սակայն դժվար է ասել, թե Կարնո քաղաքի ո՞ր հայկական եկեղեցու հետ է կապված այս ավանդությունը։ Գուցե նա կապված է այն նշանավոր տերունական խաչի նշանի հետ, որը քաղաքի գանձերից մեկն է համարվել։ Համենայն դեպս այս ավանդությունը և քաղաքի հիմնադրման խնդրո առարկա զրույցը արաբ մատենագրության մեջ մուտք են գործել բանավոր միջոցով, քանզի արաբ մատենագիրները շատ հաճախ էին հավաքում նման զրույցներ Հայաստանում։

Քննարկված արաբական ավանդությունը մեկն է այն հայկական ավանդություններից ու պատմական զրույցներից, որոնք բանավոր ձևով վերցվել են արաբ մատենագիրների կողմից։ Այս ավանդությունը մեզ ստիպում է վերանայել Կարնո քաղաքի պատմությունը, քաղաք, որը միջնադարյան արևելքի պատմության մեջ չափազանց կարևոր դեր է կատարել։

# КАРИН-ФЕОДОСИОПОЛЬ В ЛЕГЕНДЕ И В ИСТОРИИ

А. Н. ТЕР-ГЕВОНДЯН

## Резюме

У арабского историка IX в. Балазури существует предание об основании города Карин (Феодосиополь) женщиной по имени Кали, женой патрикия Армении, а город был назван Каликала (благодеяние Кали). Аналогичное предание упоминается еще в анонимном историческом сочинении Narratio de Rebus Armeniae, согласно которому св. Варфоломей построив церковь в Карине, назвал это место (село) Καλὴ ἀρχή (доброе начало), а в дальнейшем оно было названо Феодосиополь.

Арабское имя этой женщины—Кали—происходит от греческого названия места. Дело в том что армянский Карин в сирийском передан как Калин, который и является основой для греческой Кали архи (в среднегреческом произношении).

По этому поводу в статье дается краткая история Феодосиополя от основания до XI в. Этот укрепленный город играл чрезвычайно важную роль сперва в борьбе греков против Ирана, а затем арабов против Византии.

---

[47] Bibl. Geogr. Arab. V, 295.